Հ. ԱԹԱՆԱՍ ՏԻՐՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Ի ՃԱՒԱ

Խմբագրութիւնս ստացաւ Սուրապայայէն հեռաւեալ պատուական նամակը, զոր և մենք այս էջերուն վրայ կը հրատարակենք՝ ի յարգանս հանգուցեալ բազմարդիւն Մխիթարեան վարդապետին։ ԽՄԲ.

ԲԱԶՄԱՎԷՊ *ի մեծապատիւ խմբագրութեան*

Ի Սբ. Ղազար

Բազմավէպ—ի Սեպտեմբեր համարէն, որ չորս օրով յառաջ ստացայ, խորին ցաւով տեղեկացայ որ Վ. Հ. Ա.թանաս վրդ. Տիրոյեան կնքել է մահկանացուն Սեպտ. 1–ին։ Այդպիսի բեղմնաւոր և բազմարդիւն կեանքի վախճանը՝ արդարև մեծ կորուստ է թէ ազգիս և թէ մեծապատիւ Ուխտիդ համար։

Կը փութամ քաղաքիս հայ համայնքի, ի մասնաւորի տեղւոյս Մանուկ և Յարութիւնեան Ուսումնարանի ուսուցչական կազմի և աշակերտ—ուհիների կողմանէ՝ անկեղծ ցաւակցութիւն յայտնել պատկառելի Միաբանութեանդ այդ վշտալի կորստին համար։

Տիրոյեան վրդ.ի անակնկալ մահուան բոթը ի վիշտ համակեց մեր զաղութը. ոչ միայն որովհետև նա Մխիթարեան մեծայարգ Հայրերէն էր, այլ այն բացառիկ պարագային պատճառաւ մանաւանդ, որ մեր Մ. և Յ. Ուսումնարանի անցեալ երկու ամավերջի դպրոցական հանդէս—երեկոյթներին առթիւ օգտուել էինք գիտնական Հանգուցեալի յօրինած «Երկու Մայրայեղներ» և «Նեկտարիեն արդարասեր» թատերգութիւններէն, և այս ամավերջի հանդէսին համար կը պատրաստէինք ներկայացնելու նրա «Յանդուիտ Համբերատար» pièce։

«Երկու Մայրայեղներ» կատակերգութիւնը խիստ ծիծաղաշարժ կտոր էր, և դերերը շատ յաջող կատարեցին երկու փոքր աշակերտներ։ Իսկ Նեկտարինէ արդարասէր բարոյակրթական pièce՝ տասներկու աշակերտուհիք 12–17 տարեկան, խաղացին հիանալիօրէն և հասարակութիւնը ըմբոշխնեց զայն լիասիրտ։ Գլխաւոր դերակատարուհիքն էին Օրք. Մ. Ղ. Ցակոբեան (իշխանուհի), Ա. Գալստանեան (Նեկտարինէ), Շ. Մ Մարգարեան (Զաբէլ), Կ. Մինասեան, և Գ. Գալստանեան։ Ընդարձակ սրահին մէջ ծայրէ ի ծայր խրատնուած բազմութիւնը խանդավառ և բուռն կը ծափահարէր. յուզմունքէն շատեր արցունքի շիթեր շտապ կը սրբէին աչերէն։ Կտորը թերևս անոր համար աւելի ապաւորիչ էր՝ որովհետև դէպքերն ու դէմքերը տեղի ունեցած էին Արարատեան երկրում։

Եւ որպէս զի պիէսն աւելի լաւ հասկընալի լինէր զաղութիս հայերին, ստիպուած էինք գրեթէ ամբողջ կտորը արարատեան բարբառի վերածել։ Նոյնը հարկադրուած ենք անելու և Յանդուիտ Համբերատարի բարբառը։

Հ. Ա.թանաս Տիրոյեանի մահուան բոթի առթած մեր յուզմունքը բացատրելի է այն իրողութեան պատճառաւ մանաւանդ, որ մինչ մի ամէ ի վեր կը պատրաստուէինք առաջիկայ ամավերջի դպրոցական հանդէսին առթիւ ներկայացնելու երջանկայիշատակ թատերգակին «Յանդուիտ Համբերատար» գեղեցիկ իսաղը, և ըմբոշխնելու զմայլելի համբերատարութեան յաղթանակն ու արժանաւոր վարձատրութիւնը, հանուում է մեզ յանկարծ

digitised by A.R.A.R.@

կալս՝ Նրա մահուան ցնցող լուրը. ինչ հեգնութիւն։ Եւ ինչ տարօրինակութիւն... թատերախաղը, որի գործողութիւնը հանգ. Վրդ.ի ծննդավայր կարինումն է տեղի ունենում... վաղը ներկայացուելու է բնաշխարհի նշանաւոր քաղաքէն 6–7 հազար մղոն հեռու մի փոքրիկ գաղթավայրում...

Հանգ. Տիրոյեան Հօր ցաւոտութիւն մահուան լուրը պիտի յատկապէս հաղորդենք հանդէսին ներկայ եղող հասարակութեան, և Նորա օրհնեալ յիշատակը յարգենք յոտնկայս։

Յարգանօք. Զերդ վշտակից

Ց. ՏԷՐ Կ. ՑՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Սուրաբայա. 25 Հոկտ.ի 1926

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. – Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1926, էջ 316)

ՃԿԶ.

Հետեւեալ թուղթին ակնարկը կը վերաբերի Պոլսոյ Վենետկեան Դեսպանին, ինչպէս նամակին ընթացքին պիտի տեսնուի արդէն։ Նամակագիրը կը տեղեկագրէ նաև յիշեալ Դիւանագէտին հանդէպ ցոյց տրուած նշանակալից պատուասիրութիւն մը մեթայնոց կողմանէ, որ այնքան նախանձ շարժած է հակառակորդներու։

Գերամեծար Տեառն Տեառն Յովհաննէս քաջ հովուիդ Ստեփանոսի
Ազատուածարանութեան վարդապետիդ և մեծի Աբբայիդ ողջոյն խունարհագէմ մատուցցի

ի Կոստ. յամի 1754 ի մայիսի 19

... ի յանցեալ ամսոյն իշուցին ի ծով զիւշամպաուի նաւ մի, որ ի Թագաւորութեան տանկաց չէր բնաւ տեսեալ ի Ֆէնէր՝ ի տանն ասկէյեանց առ ի տեսանել զտեսիլն զայն զարհուրելի։ Բայց չեղև հնար՝ զի նա թէպէտ կամեցաւ գալ, այլ քափիթանան յղեալ մարդ՝ հրաւիրեաց ի տուն իւր։ Վասն որոյ չկարացեալ զդէմ ունել՝ գնալ ի տուն նորա։ Եւ յետ սակաւ աւուր դէպ եղև անցանել արքունի ձիոց ընդ այն, և կոչել մեր գնա հանդերձ երեւելեօք նորա. և ցուցանել մեր զարարողութիւնն տանկաց, ընդ որ յոյժ զուարճացաւ անձն նորա։ Եւ յետ անցանելոյն ձիոց պատրաստեցաք նմա՝ (իրաւի) տեղան արքունի. զտունն աւուր յառաջ մաքրելով և զարդարելով որպէս և վայելուչն է։ Եւ ընդ մեր պատիւն այնքան բերկրեցաւ, որ հաստատեաց բանիւ ի կոստանդնուպօլիս չտեսեալ զայնպիսի պատիւ և զսեղան։ Եւ եկաց առ մեզ զօրն ողջոյն. և ապա չուեաց գնաց ի

digitised by A.R.A.R.@